ՀԱՐՑԱԶՐՈՅՑ՝ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԷՄՄԱ ԿԱՊՐԻԷԼԵԱՆԻ ՀԵՏ

Ծ. Լոնտոնի համալսարանի School of Economics and Sociology բաժանմունքի տոհթորական ուսանող Հրաչ Ջիլինկիրեան, որ անցնող ամառ կը գտնուէր Լեռնային Ղարաբար իր թեզի կապակցութեամբ հետազօտութիւններ կատարելու, կ'ունենայ հարցազրոյց մը նոր խորհրդարանի անդամ և քարտուղար Էմմա Կապրիէլեանի հետ Օգոստոս 25, 1995-ին: Ստորեւ կը ներկայացնենք այդ հարցազրոյցի հիմնական միտքերը:

Ո՞վ է Էմմա Կապրիէլեան

Ծնած է 1946-ին Արցախ, Ստեփանակերտ: Նախնական ու միջնակարգ ուսումը ծնողավայր քաղաքի մէջ առնելէ ետք, կը մեկնի Երեւան ու կ'ուսանի Պետական համալսարանի բանասիրական ֆակիւլտէն: Աւարտելէն ետք կը վերադառնայ հայրենի քաղաք և կրթական ասպարէզին կը նուիրուի. նախ՝ որպէս ուսուցչուհի, ապա վարչական պատասխանատուութիւններ կը վերցնէ որպէս ուսմասվար և լուսաւորութեան տան տնօրէն: Ապա կ'անցնի պետական վարչամեքենայի մէջ և կ'ընտրուի քաղաքային կոմիտէի պետական հիմնարկներու միութեան նախագահ, վերջին 10 տարիներուն Ստեփանակերտ քաղաքի Քաղխորհուրդի պատգամաւոր և Գործկոմի քարտուղար: 1995-ին կ'ընտրուի Հանրապետութեան ժողովրդական պատգամաւոր և խորհրդարանի քարտուղար: Ան ամուսնացած է փոխ վարչապետի օգնական, պատմաբան Վալէրիկ Կապրիէլեանի հետ, ունի 3 աղջիկ ու 3 թոռներ

ՀԱՐՑՈՒՄ.- Կրնա՞ք մեզի ներկայացնել Լեռնային Ղարաբաղի նոր շրջանը իր ընդհանուր գծերով, որպէս նոր խորհրդարանի քարտուղար:

ՊԱՏԱՍԽԱՆ.- *Ապրիլ 30-ին 1995, եղան նոր ընտրութիւններ և ընդամէնը 33 պատգամաւորներ ընտրուեցան տարբեր շրջաններից և քաղաքից ամբողջ Հանրապետութեան համար, որոշապէս կրճատելով նախորդ շրջանի պատգամաւորների թիւը: 1-ի փոխարէն ընտրուեցին 8 կանայք: Մեր հանրապետութեան առաջին խորհրդարանական Գերագոյն Խորհուրդը մշտապէս գործող օրէնսդիր օրկան չէր, այլ՝ ամէն մի պատգամաւոր աշխատում էր իր աշխատանքի տեղում, նստաշրջանից նստաշրջան ներկայանում և մասնակցում էին հարցերի քննարկմանն, ընդունման և այլ աշխատանքներին: Այս մեր նոր խորհրդարանը տարբերւում է նախորդից նրանով, որ սա մշտապէս գործող օրէնսդիր մարմին է, որտեղ պէտք է մշակուեն ու ընդունուեն և քննարկուեն մեր հանրապետութեան օրէնքները: Այսինքն՝ մեր պետութեան ամրապնդման և կայունացման համար սա շատ կարեւոր գործօն է, որովհետեւ ինչպէս գիտէք ընդամէնը 4 տարուայ պատմութիւն ունի մեր պետութիւնը և պէտք է կարողանանք ունենալ մեր օրէնքները, մեր սեփական օրէնքները որոնցով կարող են օգտուել և այդ օրէնքներով առաջնորդուել:*

ՀԱՐՑՈՒՄ.- Նախագահն ու վարչապետն յայտարարած են ոչ պատերազմ և ոչ խաղաղ շրջան Լեռնային Ղարաբաղի համար: Այս կապակցութեամբ ի՞նչ հարցեր կան խորհրդարանի առաջ:

ՊԱՏԱՍԽԱՆ.- *Այո՛, ոչ պատերազմ է և ոչ խաղաղութիւն, երկար ժամանակէ ի վեր երաշխաւոր է, գինադադար: Մարդիկ կարողանում են մի փոքր շունչ քաշել, իրենց օրուայ հոգսը հոգալ, առանց այն էլ պատերազմը վատ կնիք է դրել ժողովրդի ապրելակերպի, բարեկեցութեան վրայ:*

Մեր խորհրդարանը պէտք է առաջին հերթին այնպիսի օրէնքներ մշակի, ընդունի, որը կարողանայ նպաստի ժողովրդի բարեկեցութեան, սոցիալական վիճակի մի փոքր բարձրացման վրայ, ընդհանրապէս խաղաղութեան ամրապնդման, և այլ բնագաւառների զարգացման, որ կարողանայ ժողովուրդի հոգսերը մի փոքր թեթեւացնի: Մենք ընդունել ենք ռազմական դրութեան մասին օրէնք, ինչպէս գիտէք այստեղ ռազմական դրութիւն է յայտարարուած և երկարաձգուել է մինչեւ Յունուարի 1-ը. տայ Աստուած որ ամէն ինչ լաւ լինի, խաղաղութիւնը շարունակուի և ժողովուրդը կարենայ ապրել, մի փոքր շունչ քաշել:

ՀԱՐՑՈՒՄ.- Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան պետական վարչամեքենան ինչպիսին է, ինչպիսի ճիւղաւորումներ կան, սոցիալ կամ այլ մտահոգութիւններով զբաղող հիմնարկներ, մինիստրութիւններ և այլն:

ՊԱՏԱՍԽԱՆ.- *Դուք գիտէք, որ մայր Հայաստանի հետ մեր վերամիաւորման այդ հարցը բախուել է կայսերապաշտական քարացած մտայնութեան և ինքնորոշման պայքարը ձեւափոխել ազգամիջեան պատերազմով, հեղուել է բազում մարդկանց արիւնը. մեզ մնում էր անցնել անկախ պետականութեան ստեղծման:*

1991 թուականի Սեպտ. 2-ին, ընդունուեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւն-ի մասին հռչակագիր, իսկ Դեկտ. 10-ին հումշխարհային ընդունուած նորմերով միջազգային մակարդակով հասկացուած հանրագիրերով մեր ժողովուրդը իր կամքը արտայայտեց յօգուտ ազատ անկախ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան, կազմաւորուեց հանրապետութեան խորհրդարանը, կառավարութիւնը, ստեղծուեց պաշտպանութեան պետական կոմիտէն, բանակը, ճեղքուեց շրջափակումը և ձեւաւորուեց քաղաքակիրթ երկրի յատուկ օրէնքի գործադիր և դատական իշխանութիւններ:

Այս համակարգից յետոյ ընտրուեց Լեռնային Ղարաբաղի նախագահը: Մեր կառավարութիւնում գոյութիւն ունին նախարարութիւններ, վարչութիւններ և տեսչութիւններ: Ամէն մէկը իր համակարգի աշխատանքները ֆօրտիֆիցնելով բարենպաստ պայմաններ է ստեղծում, որպէսզի կարողանայ ժողովուրդը աշխատել, գործել, մտածել՝ ամէն մէկը իր բնագաւառով, իր ճիւղով: Ներկայումս այդ ամէն ինչը ստեղծուած է և կան նախարարութիւնները և բոլոր այն սբրուիթուրաները, այն բաժինները որոնք պէտք են հանրապետութեան համար:

ՀԱՐՑՈՒՄ.- Հայաստանի Հանրապետութեան և Լեռնային Ղարաբաղի միջեւ ուելի մօտիկ յարաբերութիւններ ստեղծուել են ըսիք, կրնա՞ք ուելի ընդլայնել այս հաստատումը, ինչպիսի՞ն են այդ յարաբերութիւնները:

ՊԱՏԱՍԽԱՆ.- *Ի հարկէ շատ լաւ յարաբերութիւնների մէջ են Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը և Հայաստանի Հանրապետութիւնը, կասկածելու ոչինչ չկայ: Մենք լաւ յարաբերութիւններ ունինք նաև այլ հանրապետութիւնների հետ, նախկին մեր Խորհրդային Միութեան հանրապետութիւնների հետ էլ և երեւի մեր պետութիւնը, որ մենք ըստեղծեցինք, դա ստիպում էր նաև միւս պետութիւններին ընկալել մեր պահանջը:*

ՀԱՐՑՈՒՄ.- Ինչ են Լեռնային Ղարաբաղի և Սփիւռքի յարաբերութիւնները:

ՊԱՏԱՍԽԱՆ.- *Սփիւռքում մեզ արդէն ճանաչեցին շատ պետութիւններ: Սփիւռքը լաւ ըմբռնելով թէ ինչ է կատարւում Ղարաբաղում սկսեց իր աջակցութիւնը թէ հոգեպէս թէ նիւթապէս և թէ ինչով կարող էր հեռուից հեռու օգնել Ղարաբաղին: Այս մեր պայքարը, մեր պահանջը ուելի միասնական դարձրեց մեր ժողովուրդին որտեղ էլ որ ուզում է լինի նա: Նրանք սկսեցին ուելի լաւ ճանաչել Ղարաբաղի ժողովուրդին, եթէ մինչեւ այդ նրանք այդքան էլ չէին ճանաչում, նրանից յետոյ նրանք սկսեցին ուելի լաւ ճանաչել մեր ղարաբաղցիներին, օգնել նրանց: Սերտ կապեր ստեղծուեց ընփիւռքի հայերի և ղարաբաղցի հայերի միջեւ և մինչեւ վերջ ալ նրանք կարող են այդ ձեւի օգնութիւն հասցընել Ղարաբաղի ժողովուրդին մինչեւ նրանց վերջնական յաղթանակը: Մենք գիտենք, որ յուսդրութիւնը այս հարցում մեր միասնութեան և համախմբուածութեան մէջ է, միայն դրանով կարող է ղարաբաղցին իրեն ուելի լաւ զգալ և զգալ որ ինքը մենակ չէ:*

ՀԱՐՑՈՒՄ.- Որոշակի սպասումներ ունի՞ք Ղարաբաղի համար Սփիւռքահայութենէն:

ՊԱՏԱՍԽԱՆ.- *Սփիւռքը լաւ ըմբռնեց թէ ինչ է ուզում ղարաբաղցին, ուրիշ ոչինչ չի ուզում այլ ազատ, անկախ իր հանրապետութիւնում ապրել: Մտածում եմ այլ ոչ մի ժամանակ Սփիւռքահայութիւնը յետ չի կանգնի Ղարաբաղին նեցուկ կանգնելու իր գոյութիւնից, իսկ մեզանից ամէն մէկը պէտք է նպաստի որ այն ինչ որ կայ մինչեւ վերջ պահուի:*

ՀԱՐՑՈՒՄ.- Ցիշեցնի՞ որ խորհրդարանին մէջ 8 կիներ կան. հայ կինը մեծ դեր ունի այս պայքարին մէջ թէ պետականութեան զարգացման և ընդհանուր առմամբ պայքարի գծով. կրնա՞ք մեզի ձեւով մը ընութագրել հայ կինը:

ՊԱՏԱՍԽԱՆ.- *Դուք ճիշդ էք նրկատել, որ կանանց դերը ընդհանրապէս շատ մեծ է, որովհետեւ պայքարի հենց առաջին օրերից, կանայք բարձր գիտակցութիւն ցուցաբերելով տղամարդկանց հետ միասին, տղամարդու նման կատարել են իրենց դերը կախուած դերը, իրենց ամուսիններու հետ կողք-կողքի, մէջք-մէջքի, պայքարը հասցրել են մինչեւ վերջը: Ղարաբաղում ընդհանրապէս կանայք սկսած հենց տղամարդու ամենաղժուարին գործից մինչեւ վերջին աշխատանքները տանում են, ցոյց տալով ամէն մի աջակցութիւն որպէսզի տղամարդիկ լաւ զգան: Մենք շատ մեծ կորուստներ տուեցինք, այնման որդեկորոյս մայրեր ունինք, որբեւայրի կանայք կորցրել են իրենց ամուսինները շատ ջահել հասակում: Անոնք հասկանում են, որ իրենք այդ անում են յանուն հայրենիքի, յանուն մեր ազատութեան և անկախութեան համար: Այս մօտէնը կանայք շատ լաւ են ըմբռնում, դրա համար ամէն կերպ աջակցում են մեր հանրապետութեան կայունացման և խաղաղութեան ամրապնդման: Ճիշդ էք նկատել, կանանց դերը մեր մօտ շատ բարձր է:*

ՀԱՐՑՈՒՄ.- Կա՞ն որոշակի յատկութիւններ որոնցմով ղարաբաղցի կինը կը տարբերի ուրիշ հայ կիներէն Հայաստանի մէջ կամ Սփիւռքի տարածքին:

ՊԱՏԱՍԽԱՆ.- *Շատ ծանօթ չեմ, որ կանայք Սփիւռքում ինչ ձեւի պաշտօններ կարող են կատարել:*

Էմմա Կապրիէլեան
ԼՂՀ խորհրդարանի քարտուղար և ԼՂՀ Կանանց Միութեան խորհուրդի անդամ

Մեր մօտ խորհրդարանում պաշտպանութեան, անվտանգութեան, պետական, շինարարութեան, իրաւունքի և օրինականութեան գծով մեր յանձնաժողովի նախագահը կին է այսօր, ինչպէս նաև կին է տնտեսութեան, պիւտճէին, ֆինանսների և վարկերի գծով յանձնաժողովի նախագահը: Ինչպէս տեսնում էք խորհրդարանի քարտուղարը ևս կին է: Ղարաբաղում կանայք համարեա թէ հաւասար են տղամարդկանց և կարող են ամէն պաշտօն վարել: Ինձ թւում է թէ Ղարաբաղում ինչ որ տղամարդիկ կ'անեն, կանայք ևս կարող են անել: Այս ասելով չեմ ուզում նսեմացնել տղամարդկանց, մէկ է, ի հարկէ, ինչ ուզում ես արա, տղամարդը մնում է տղամարդ, կինը մնում է կին, բայց յամենայն դէպս կանայք ձգտում են ինչ որ բանով նպաստել: Մեզ մօտ պատերազմական վիճակ է, տղամարդիկ զինուորագրուած են հայրենիքին և կանայք որոշ տեղ նրանց դերը պէտք է կատարեն, որպէսզի կարողանան ամէն ինչ նորմալացնել մեր հանրապետութեան կեանքում:

ՀԱՐՑՈՒՄ.- Ընդհանրապէս ինչ են այսօր ղարաբաղցիին մտահոգութիւնները:

ՊԱՏԱՍԽԱՆ.- *Ղարաբաղցիներին առաջին հերթին մտահոգում է խաղաղութեան ամրապնդումը: Մենք շատ երիտասարդներ կորցրինք, սոցիալական վիճակը դում ինքներդ նկատում էք թէ ինչ ձեւի է, շրջափակում կատարուեց մեր հարեւան հանրապետութեան կողմից, Ատրպէյճանի ճանապարհների փակումը մեծ դժուարութիւն ստեղծեց, ունինք մի ճանապարհ որով դուք եկաք այստեղ, որը մեր Հանրապետութիւնը կը կապի արտաքին աշխարհի հետ, այդ ճանապարհը մենք ուզում ենք ամէն գնով պահել, որը մեծ նշանակութիւն ունի մեր կեանքի համար, աշխարհի հետ հաղորդակցելու համար: Մենք հոգում ենք ամէնից շատ մեր որբ մնացած երեխաներին, քանալով մի կերպ բեթեւացնել նրանց հոգսերը, որպէսզի նրանք ուսում առնեն, ապրեն առանց իրենց հայրերի: Շատ ընտանիքներ կան, ծնողներ որոնք երկու տղայ են ունեցել և կորցրել են նրանց: Հարկաւոր է, որ մենք այդ ծեր, անօթեւան մարդկանց բարեկեցութիւն ապահովենք, հոգսերը մի փոքր թեթեւացնենք և դուրս գանք այս ճեղքուածքից, ամրապնդենք խաղաղութիւնը: Ընդհանրապէս մեր ժողովուրդին առաջին հերթին մտահոգում է այդ հարցը:*

Կ'ուզեմ, որ ամբողջ աշխարհում լինի խաղաղութիւն, քանի որ մենք տեսել ենք պատերազմի արհաւիրքները և այն վնասները որ կրել է մեր ժողովուրդը, որպէսզի Ղարաբաղի հողում այլեւս արիւն չթեղուի, որպէսզի խաղաղութիւն տիրի, որպէսզի մեր մանուկները չնայած որ որբ են մնացած, մեծանան, և էլ այլեւս պատերազմ չտեսնեն իրենց այրերով, ես ամէնից շատ դա եմ ցանկանում մեր ժողովուրդի համար: